РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
ГЕТАЗАТСКАЯ
СРЕДНЯЯ ШКОЛА
ИМЕНИ НОРАЙРА
МАНАСЕРЯНА
АРАРАТСКОГО МАРЗА

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
«ԳԵՏԱԶԱՏԻ ՆՈՐԱՅՐ
ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

REPUBLIC OF ARMENIA ARARAT REGION SCHOOL OF GETAZAT VILLAGE

Արարատի մարզ գ. Գետազատ Араатский марз с. Гетазат E-mail: getazat@schools.am

06.10.2021թ.
Ելք № 65

Արարատի մարզպետ
պարոն Ռ. Թևոնյանին

Հարգարժան մարզպետ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ <<Արարատի մարզի Գետազատի Ն.Մանասերյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Տեխնոլոգիա>> /8 դասաժամ/, <<Բնագիտություն>> /2 դասաժամ/, <<Կերպարվեստ>> /2 դասաժամ/, <<Հայոց եկեղեցու պատմություն>> / 7 դասաժամ/, <<Քիմիա>> /9 դասաժամ/, <<Ֆիզիկա>> / 13 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթը կկայանա 2021թ. հոկտեմբերի 21-ին՝ ժամը 14^{00}-ին:

Կից ներկայացվում է հայտարարությունը:

Առդիր 1 էջ:

ՏՆՕՐԵՆ Լ.Գեղամյան

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ <<Արարատի մարզի Գետազատի Ն.Մանասերյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (8 դասաժամ), բնագիտության (2 դասաժամ), հայոց եկեղեցու պատմության (7 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), քիմիայի (9 դասաժամ), ֆիզիկայի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 – 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 21-ին՝ ժամը 14:00-ին ՀՀ Արարատի մարզի Գետազատի Ն.Մանասերյանի անվան միջնակարգ դպրոցում: Հացեն՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Գետազատ, Բաղրամյան 1/1: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 64-10-01 հեռախոսահամարով: